ՄԱՐՈ ԱԼԱԶԱՆ

ԱՐՓԵՆԻԿ ԵՎ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑՆԵՐ

(Հատված «Իմ կյանքի ողբերգությունը» հուշերից*)

Առանց Արփիկի Չարենցի մասին գրել հնարավոր չէ. նրանք իմ «Հուշեր»-ում միշտ միասին հանդես կգան: Նրանք իրար հետ կապված էին ընկերական և ընտանեկան ամենաջերմ ու ամուր կապերով: Ոչ մի «հրեշտակ» չէր կարող Չարենցին անջատել Արփիկից: Արփիկը ամեն ինչ էր Չարենցի համար, առանց որի նա իր կյանքը չէր պատկերացնում:

Ինչ պայմաններում և ինչպես եմ ծանոթացել Չարենցի և Արփիկի հետ՝ չեմ հիշում: Գիտեմ, որ դա 1924-25 թվականներին էր:

Չարենցն ինձ վրա արտակարգ տպավորություն չթողեց. նա սովորական հայ էր՝ հայկական մեծ քթով, կարճ ու վտիտ հասակով, գլուխը քիչ թեքած պարանոցին: Աչքի էր ընկնում իր անկանոն քայլվածքով: Նա իր խոսակցին անմիջապես գրավում էր աշխույժ, բովանդակալից, հետաքրքիր խոսակցություններով և իր անսահման տարօրինակություններով: Նա միևնույն հետաքրքրությամբ կխոսեր մի երեխայի, մի խուժանի, մի աղջկա և մի գիտնականի հետ. բոլորի հետ հատուկ մոտեցում ուներ:

Չարենցը շուտ տպավորվող, ազդեցությունների տակ ընկնող, անմիջապես իր սխալը զգացող, շուտ ոգևորվող, հիասթափվող և վերին աստիճանի կասկածամիտ էր: Այսօր մեկի հետ կընկերանար, վաղը կասկածանքով կվերաբերվեր այդ մտերմությանը: Հաճախ էի ես նրանից լսում այս խոսքերը. «Ա՜յ տղա Ալազան, այսինչ մարդը անկեղծ չէ իմ նկատմամբ»:

* * *

Չարենցը մի անգամ ինձ նախատելով ասաց. «Ա՛յ Մարո, դու գրական չորս սերնդի ներկայացուցիչների հետ էլ մոտ, ջերմ փոխհարաբերությունների մեջ ես, ինչո՞ւ դենևիկ *(օրագիր – խմբ.)* չես պահում: Դու գիտե՞ս, թե ինչ հետաքրքիր և կարևոր նյութ ունես սերունդներին հանձնելու. ես գիտեմ, որ դու կարող ես գրել, քանի որ դու գրական և քաղաքական հարցերում բավականին պատրաստ ես և վերջապես, որպես կոմերիտական ու պատկոմ՝ հասարակական ու քաղաքական արենայում ես: Բեր մի օբշչի *(ընդհանուր – խմբ.)* տետրակ, ես քեզ դենևիկ գրելու ձևը սովորեցնեմ»:

Նա որպես օրինակ գրեց Ալեքսանդր Շիրվանզադեի մասին և ասաց. «Այ այս ձևով էլ կգրես մյուս գրողների մասին, հասկացա՞ր, տե՛ս՝ կստուգեմ»:

**Մ. Ալազանի հուշերը տպագրվում են կրճատումներով և մասնակի խմբագրումով:*

* * *

Անցել էին տարիներ: Արփիկը քաղաքում չէր: Նա, Չարենցին ինձ ու Ալազանին «պահ» տալով, գնացել էր Լենինգրադ՝ քննություններ հանձնելու: Չարենցը, ես ու Ալազանը Աբովյան փողոցով զբոսնում էինք: Ճաշի ժամ էր:

- Չարե՛նց, մենակ ես, ո՞ւր ես գնում: Գնանք, մեզ մոտ ճաշենք, հանգստանանք ու մի քիչ զրուցենք, - ասաց Ալազանը:

- Գնանք:

Ապա ինձ դառնալով՝ հարցրեց.

- Ի՞նչ ճաշ ունես, Մարո՛:

- Տոլմա:

- Կաղամբո՞վ է, թե՞ խաղողի թփով:

- Քո սիրածն է՝ խաղողի տերևով, սխտորով ու մածնով:

- Իսկ «առյուծի կաթ»՝ պիվա *(գարեջուր – խմբ.)* էլ ունե՞ս:

- Ունեմ:

- Մալադե՛ց Մարո, դե գնանք:

Ճաշկերույթը սկսվեց: Մի երկու բաժակ «առյուծի կաթ» խմելուց հետո Չարենցն ասաց.

- Մարո՛ ջան, մի դնևնիկդ բեր, տեսնեմ՝ ինչպես ես գրում:

- Հիմա, Չարե՛նց ջան, ճաշենք, սեղանը հավաքեմ, հետո կբերեմ, լա՞վ:

Ես դիտմամբ ճաշը ձգձգեցի, որ նա մի քանի բաժակ էլ խմեր և դնևնիկի մասին մոռանար. ուղղակի ամաչում էի այդպիսի վարպետ գրողին ցույց տալ իմ անփորձ գրչի թոթովանքները: Սակայն ճաշից հետո օրագրի մասին Չարենցը նորից հիշեցրեց: Ես, կարմրած, դողդողացող ձեռքերով օրագիրս նրան հանձնեցի: Ալեքսանդր Շիրվանզադեի մասին գրածներս կարդալուց հետո կարդաց իր մասին գրածներս և շեշտակի վիզը ծռելով՝ ասաց.

- Է՜, Մարո՛ ջան, գրածդ ինձ դուր չեկավ: Իմ մասին գրել ես քաղաքականությանն ու մոդային տուրք տալով: Ա՜յ աղջի, Չարենցին պետք է ներկայացնել իր դրական ու բացասական բոլոր կողմերով ու խենթություններով: Լավ է, որ քիթս էլ չես փոքրացրել, բոյս էլ Ալազանի բոյին հասցրել: Չեղավ, չեղավ: Ա՜յ աղջի, դնևնիկ գրելիս պետք է լինես անկեղծ, պետք է գրես այնպես, ինչպես գրողին գիտես, ոչ ավելացնել, ոչ պակասացնել, պետք է գրես նրա կենդանի խոսքերը և ասածները, հասկացա՞ր:

- Բայց մի՞թե կարելի է քո բոլոր ասած խոսքերը գրել, չէ՞ որ դու այնպիսի անցենզուր խոսքեր ես ասում, որ լսել անգամ չի կարելի, էլ ո՞ւր մնաց գրելը:

- Իմեննո *(հատկապես – խմբ.)* այդպիսի բաները պիտի գրես: Հենց դա էլ կլինի լավագույն դնևնիկը: Դե առ ու շարունակի՛ր, մյուս անգամ նորից կստուգեմ:

Այո՛, սիրելի՛ Չարենց, ցավոք «դնևնիկս» սերունդներին չհասավ, այն զոհ գնաց անձի պաշտամունքին, բայց «Հուշերս» գրեցի քո ցուցումներով: Թե ինչպես այն կանցնի ցենզուրայով *(քննադատությամբ – խմբ.)*, չգիտեմ: Իսկ եթե չընդունվի սերունդների կողմից, դու ես մեղավոր:

* * *

Չարենցը բանավեճերում և գրական հավաքույթներում խոսում էր մաքուր գրական լեզվով: Հաճախ էլ, այս կամ այն գրողին նկատողություն անելով, ասում էր. «Ա՛յ տղա, հայ գրող ես, գրի՛ր և խոսի՛ր մաքուր հայերենով»:

Բայց ինքը ընկերական շրջանում խոսակցության մեջ հաճախ էր ռուսերեն բառեր գործածում:

* * *

1920-ական թվականներին գրականության մեջ իշխում էր պատվերով գրելու միտումն: Ըստ այդ պատվերի՝ գրողը պետք է գրեր արդյունաբերական, կոլխոզային կյանքից և օրվա հրատապ հարցերից: Ծաղիկ, աղջիկ, սեր, բնության գեղեցկությունները դուրս էին շպրտված գրականությունից: Այդ թեմաների մասին գրողը համարվում էր մանր բուրժուական և քաղքենիական գրող (որպես այդպիսին բանավեճերում և ընկերական շրջաններում հաճախ էր հոլովվում Մահարու անունը): Չարենցին էլ դուր չէր գալիս պատվերով գրելու գաղափարը, և նա հաճախ էր բորբոքված ասում. «Ա՛յ տղա, ես հո սապոժնիկ *(կոշկակար - խմբ.)* չեմ, որ պատվեր ընդունեմ: Գրողը պետք է իր ստեղծագործություններում ազատ և անկաշկանդ լինի. ի՞նչ է նշանակում տրակտոր, արոր, գործարան ու բանվոր երգիր: Եթե նրանք իմ նյութի հետ առնչվում են, առանց պատվերի էլ, ինքն իրեն կգրվի»:

* * *

Բերիայի մասին նա հաճախ ասում էր. «Ա՛յ տղա, այդ վրացական կինտոն, Սուխումի պարիկմախերը *(վարսավիր – խմբ.)* ո՞ր արժանիքներով, ի՞նչ ճանապարհով Զակրայկոմի գլուխն անցավ՝ չհասկացա»:

* * *

Արփենիկ Չարենցը սիրունատես, սպիտակադեմ, շագանակագույն մազերով, ուղիղ դիմագծերով, զարգացած, բովանդակալից, ծով համբերության և մեծ կամքի տեր կին էր: Չարենցին սիրում էր, մանկան պես գուրգուրում ու հոգ էր տանում: Երբեմն բարկանում, խրատում, նորից սիրում, գուրգուրում և այդ ձևով դաստիարակում ու սանձահարում էր Չարենցի խենթությունները: Արփիկն իր բարձր հասակով Չարենցի նկատմամբ նույնն էր, ինչպես Ալազանն իմ նկատմամբ: Չարենցի գլուխը հազիվ էր հասնում Արփիկի թևատակին, և դա հաճախ նպաստում էր Չարենցին «դաստիարակելու» գործին:

Արփիկը շատ կիրթ կին էր: Իր խոսքերում չափված ու ձևված էր: Նա հաճախ էր Չարենցին նախատում. «Ինչո՞ւ ես այդպես շուտ բռնկվում, քեզ կորցնում, անչափ-անձև խոսում և հետո էլ զղջում ես: Հազար անգամ ասել եմ՝ եղի՛շ, մի՛ բռնկվիր, սա՛ռը դատիր, հետո խոսի՛ր»:

Չարենցը հաճախ այս կամ այն հիմնարկի հետ գործ բռնելիս Արփիկին էր ուղարկում և ասում. «Արփի՛կ ջան, դու գնա: Եթե ես գնամ, կբռնկվեմ և գործը կփչացնեմ»:

Երբ Չարենցը «խենթություններ» էր անում, Արփիկը նրա գլուխը սեղմում էր թևատակին և «կարկուտ ու որոտ» թափում նրա գլխին: Կարճ ժամանակ անց հանդարտվում էր, նրա անձրևոտ հոգում արևը ծիածան էր կապում ու սկսում էր Չարենցին խրատել ու խրատել, իսկ Չարենցը փաթաթվում էր նրան, համբուրում նրա ձեռքերը և մեղքերի համար թողություն խնդրում: Այս ամենը տևում էր 10-15 րոպե:

Մի օր Մզկիթի բակի սրճարան գնալիս մեզ դեմ ու դեմ դուրս եկավ մի շատ գեղեցիկ կին: Չարենցը, ծուռ վիզն ավելի ծռելով, նրան մի լավ վեր ու վար նայելուց հետո բարձրաձայն ասաց. «Հետաքրքիր է՝ ո՞ւմ է պատկանում այս հրեշտակը, երանի սրա տիրոջը»: Բոլորս ծիծաղեցինք, կինը նույնպես շրջվեց ու ծիծաղեց: Արփիկն անմիջապես, սովորության համաձայն, նրա գլուխը սեղմեց իր թևատակին. «Թո՛ղ, Արփի՛կ ջան, թո՛ղ, թեկուզ երկնային հրեշտակ էլ անցնի, էլ չեմ խոսի, անզուսպ եմ, անզուսպ: Ինձ ների՛ր, սիրելի՛ս, ների՛ր»:

Մի այլ անգամ Աբովյան փողոցում բավականին զբոսնելուց հետո Չարենցն ասաց. «Ա՛յ տղերք (չնայած երկու տղամարդ և կին էինք, բայց նա, անկախ սեռից, բոլորին «ա՛յ տղերք» էր ասում) գնանք մեզ մոտ: Ալազա՛ն, քեզ մի լավ կոնյակ, իսկ Մարոյին մի լավ դուբմա կհյուրասիրեմ և ձեզ մի փաստաթուղթ ցույց կտամ, որ վավերացնեք»: Գնացինք:

- Արփի՛կ, ցույց տուր այն թուղթը, որ ես տվել եմ քեզ:

Արփիկը սեղանի դարակից մի թուղթ հանեց և մեկնեց Ալազանին: Ալազանը բարձրաձայն կարդաց. «Արփիկին: Ես՝ Եղիշե Չարենցս՝ որպես անկազմակերպ, անկարգ մի մարդ, իմ դաստիարակությունը հանձնում եմ Արփենիկ Չարենցին: Նա իրավունք ունի ինձ պատժել, ծեծել, անգամ տանից դուրս հանել: Եղիշե Չարենց»:

Մենք բարձրաձայն ծիծաղեցինք, իսկ նա, գլուխը զույգ ձեռքերով բռնած, ասաց. «Վա՜յ քեզ, հայ գրող, թե ինչպիսի ծեծ պիտի ուտես, չգիտեմ»:

* * *

Մի օր Չարենցն Ալազանին ասաց. «Ա՛յ տղա, դու Մարոյին սիրուհու պես ես սիրում: Ես էլ եմ Արփիկին սիրում, բայց դու խելագարի պես ես սիրում: Ես իմ կյանքում այդպիսի սեր չեմ տեսել: Ա՛յ տղա, մտքովս մի բան է անցնում. չլինի, թե Մարոն գրում, դու տպում ես, թե չէ ինչո՞վ բացատրել քո խելագար սերը»: Նրա խոսքերի վրա մենք մի լավ ծիծաղեցինք: Ապա նրա հոգու հետ խաղալու համար ես ասացի.

- Իսկ դու, Արփիկին սիրելով հանդերձ, ոչ մի կնոջ աչքիցդ բաց չես թողնում: Բա անհարմար չի՞:

- Ուրիշի կինը, Մարո՛ ջան, այս կոնյակի բաժակը տեսնո՞ւմ ես, այսպես խմում ու դեն ես գցում, - և կոնյակի դատարկ բաժակը շպրտեց հատակին: - Ա՛յ տղա Ալազան, եթե ես քո և Ազատ Վշտունու վիդն (տեսք – խմբ.) ունենայի, Երևանի բոլոր աղջիկներն ու կանայք իմ հետևից կվազեին:

- Առանց այդ վիդի էլ բոլոր կանայք գժված փողոցներն են ընկել քեզ համար,- կատակեցի ես:

- Ո՞ւր էր, Մարո՛ ջան, ո՞ւր, երանի քո ասածի մեկ տոկոսը իրականություն լիներ, էլ ես ինչ դարդ կունենայի, - ասաց Չարենցը սրտի մորմոքով:

* * *

Արփիկն այդ ժամանակ սովորում էր Լենինգրադում, գնացել էր քննություններ հանձնելու: Արփիկի գնալուց մեկ շաբաթ անց՝ մի առավոտ, մեր տուն եկավ Վաղարշակ Նորենցը և հուզված տոնով ասաց.

- Գիտե՞ք ինչ խայտառակություն է եղել: Չարենցին բանտարկել են: Նա երեկ բուլվարում մի աղջկա վրա կրակել է: Գնդակը ծակել է աղջկա կոնքի փափուկ մասը, նրան տեղափոխել են հիվանդանոց, ասում են՝ վերքը վտանգավոր է, բայց մահացու չէ:

- Այս ի՞նչ խայտառակություն է, - ասաց Ալազանը, հագնվեց ու Կենտկոմ գնաց, որպեսզի մի լուր իմանա:

Մի ժամից Ալազանը վերադարձավ: Նա Արփիկին հեռագրել էր, որ գա: Մի քանի օրից՝ առավոտյան ժամը յոթին, մեր տան դուռը ծեծեցին: Դուռը բացելով՝ հանդիպեցի Արփիկի հուսահատ դեմքին և արտասվալից աչքերին: Նա Ալազանին դիմելով ասաց.

- Ի՞նչ անենք, Ալազա՛ն ջան, ինչպե՞ս փրկենք Եղիշին, նա բանտում կխելագարվի, բանտի ռեժիմին չի դիմանա:

- Նախ՝ գնանք, տեսակցություն խնդրենք,- ասաց Ալազանը,- տեսնենք՝ բանն ինչումն է, ի՞նչ կասի ինքը, ապա ես կգնամ Կենտկոմ և ընկեր Աշոտ Հովհաննիսյանի հետ կխոսեմ (Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտկոմի քարտուղարն էր, իսկ Ալազանը՝ Հայաստանի գրողների միության պատասխանատու քարտուղարը):

Երեքովս վեր կացանք և գնացինք Երևանի կենտրոնական բանտ, որն այն ժամանակ գտնվում էր Երևանի ծայրամասում և կոչվում էր Ուղղիչ տուն: Ներս մտանք բանտի գրասենյակ: Ես և Արփիկը կանգնեցինք միջանցքում, իսկ Ալազանը մտավ բանտապետի մոտ: Քիչ հետո, տեսակցության թույլտվության գրությունը ձեռքին, դուրս եկավ բանտապետի մոտից: Մեզ տարան ընդարձակ մի սենյակ: Հսկիչի հսկողությամբ, կծկված, անկանոն քայլվածքով, գլուխը կախ մեզ մոտեցավ Չարենցը: Առանց մի խոսք ասելու՝ ամբողջ հասակով փռվեց Արփիկի ոտքերի առաջ, ապա կոշիկներից մեկը հանելով՝ սկսեց խփել իր գլխին. «Արփի՛կ ջան, պիտի ջարդեմ այս հիմար գլուխս, ես քեզ վիրավորել, անպատվել ու խայտառակել եմ, իսկ դու եկել ես ինձ տեսակցության»: Ապա գետնից բարձրանալով՝ փաթաթվեց Արփիկին և ամբողջ տեսակցության ժամանակ լաց եղավ: Լաց էինք լինում նաև մենք:

- Թո՛ղ, թո՛ղ, Եղի՛շ ջան, դրա ժամանակը չէ. պետք է մտածել քեզ ազատելու մասին, - ասաց Արփիկը:

- Ինչո՞ւ գնացիր, մի՞թե չգիտեիր, որ քո բացակայության ժամանակ ես սանձերս բաց կթողնեի. ահա տես ինչ վիճակի արժանացա:

- Տեսակցության ժամը վերջացավ, - ասաց հսկիչը՝ Չարենցի թևը քաշելով:

ես ու Արփիկը արտասվալից աչքերով ուղեկցում էինք Չարենցին: Ալազանը, մեզ թևանցուկ անելով, ասաց.

- Գնանք, գնանք, աղջիկներ, լացով Չարենցին փրկել չենք կարող, գնանք, Աշոտ Հովհաննիսյանին խնդրենք, գուցե մի բան անի:

Չնայած Ալազանը գնաց Կենտկոմ, բայց Չարենցին բանտից ազատել չկարողացավ: Աղջկա հայրը պատիվ էր պահանջում և Չարենցին դատի տվեց: Փակ դատական նիստում Չարենցին դատեցին: Դատապաշտպանը Գրիգոր Չուբարյանն էր՝ շատ հմուտ, խելացի, ճարտարախոս, արդարամիտ, ճանաչված ու սիրված մի մարդ: Պետական մեղադրողը աղջկա հայրն էր իր իսկ ցանկությամբ:

Պետական մեղադրողը՝ Այվազյանը, իր վերջին խոսքում դատարանից խնդրեց, որ Չարենցին ավելի խիստ պատիժ տան: Դատարանը Չարենցին տվեց երեք տարվա ազատազրկում՝ ուղղիչ տան պայմաններում:

Չարենցը դեռ բանտում էր, երբ Արփիկը շատ ծանր հիվանդացավ: Նրան տեղափոխեցին հիվանդանոց: Պարզվեց, որ նա ունեցել էր արտարգանդային հղիություն: Կատարվեց ուշացած վիրահատություն, և վրա հասավ անժամանակ մահը: Արփիկի մահվան կապակցությամբ Չարենցին ժամանակավորապես ազատեցին կալանքից: Չարենցը ողբերգական ծանր օրեր ապրեց. մի կողմից՝ բանտարկությունը, մյուս կողմից՝ սիրելի կնոջ կորուստը նրան ուղղակի խելագարության էին հասցրել: Շնորհիվ ընկերների հոգատարության և մշտական հսկողության՝ Չարենցն ազատվեց վերահաս վտանգից և ամեն տեսակ փորձանքներից:

* * *

Տարիներ էին անցել: Մի օր Ալեքսանդր Շիրվանզադեն, Ալազանն ու ես «Ինտուրիստ» ճաշարանում ճաշում էինք: Ներս մտավ Չարենցը մի չքնաղ, սպիտակադեմ, սև ու գեղեցիկ աչք-ունքով, սլացիկ կազմվածքով, բարի և ազնիվ դեմքով մի աղջկա հետ, և նստեցին մեր սեղանի մոտ:

- Ծանոթացե՛ք կյանքիս ընկերուհու՝ Իզաբելայի հետ, - ասաց Չարենցը շատ բարձր տրամադրությամբ:

Ալազանը տեղից վեր կացավ, բոլորիս գինու բաժակները լցրեց երևանյան քաղցր գինով, ապա բաժակ բարձրացնելով՝ առաջարկեց խմել Չարենցի և Իզաբելայի կենացը: Բոլորս շնորհավորեցինք նորապսակներին: Չարենցն իր երկար շնորհակալական խոսքի վերջում ինձ ասաց.

- Մարո՛ջան, ինչպես ես ու Ալազանը, ցանկանում եմ նույն մտերմական հարաբերությունների մեջ լինեք նաև դու և Իզաբելան: Իզաբելան երիտասարդ է, անփորձ (երիտասարդ ասելով նա իր հետ էր համեմատում, մենք Իզաբելայի հետ հասակակիցներ էինք) թե տնտեսության և թե բոլոր բնագավառներում: Այնպես որ դու բոլոր հարցերում պետք է նրան օգնես: Նա հայերեն գրել ու կարդալ չգիտի, կիսատ-պռատ խոսում է Շամախու բարբառով:

Առյուծային հպարտ գլուխը բարձրացնելով, հաստ ակնոցը ուղղելով, Իզաբելային ու Չարենցին նայելով, ինձ ու Ալազանին ժպտալով՝ Ալեքսանդր Շիրվանզադեն ասաց.

- Չարենց ջան, այն փաստը, որ Իզաբելան իմ հայրենակիցն է, ուրեմն ընտանիքի լավ մայր կլինի: Ձեր կենացը, ցանկանում եմ՝ ձեր հայկական նորավառ օջախն անմար մնա:

* * *

Իզաբելայի դեմքից կարդացվում էր նրա հոգու անաղարտությունը, բարի, հեզ ու համեստ բնավորությունը, բայց նկատեցի նաև, որ Իզաբելան իր մտավոր պաշարով չէր կարող բավարարել Չարենցի ծով պահանջները, չէր կարող Չարենցին օգնական ու դաստիարակ լինել:

Մինչև Չարենցը, Ալազանը ու Շիրվանզադեն խոսում էին իրենց գրական առօրյայից, ես էլ սկսեցի Իզաբելայի հետ ծանոթանալ և հարցրեցի, թե ինչպես, որտեղ, ինչ պայմաններում է հանդիպել Չարենցին, ինչպես ծանոթացել նրա հետ: Նա պատմեց հետևյալը. «Ես փոքր հասակից տեղափոխվել եմ Մոսկվա և ապրել եմ մորաքրոջս մոտ: Նոր էի ավարտել ռուսական դպրոցի յոթերորդ դասարանը, եկա Հայաստան ծնողներիս տեսության:

Մի օր ես ու պապաս Աբովյան փողոցով զբոսնում էինք: Հանդիպեցինք Չարենցին: Նա մեզ բարևեց. պապայիս հին ծանոթներից էր: Ես տպագրական հին բանվոր Ավետիս Կոդաբաշովի աղջիկն եմ: Բարևելուց հետո նա սկսեց մեզ հետ զբոսնել, պապաս ինձ ծանոթացրեց նրա հետ.

- Չարենց, ծանոթացի՛ր, աղջիկս է, նոր է եկել Մոսկվայից, հայերեն լավ չգիտի:

- Շատ ուրախ եմ, - ասաց Չարենցը՝ ձեռքն ինձ մեկնելով և մի լավ նայելով, և հանկարծ պապայիս դառնալով՝ ասաց.

- Ինչ չքնաղ աղջիկ ունես, Կոդաբաշով:

Ու մեզանից էլ պակ չեկավ: Եկավ մեր տուն, ծանոթացավ մեր ընտանիքի անդամների հետ: Մի օր էլ, վարդերի մի մեծ փունջ ձեռքին, եկավ, վարդերն ինձ տվեց և պապայիս դիմելով ասաց.

- Ընկե՛ր Կոդաբաշյան, Իզաբելան ինձ շատ է դուր գալիս, ես ուզում եմ, որ նա դառնա իմ կյանքի ընկերուհին: Խնդրում եմ, որ տաք ձեր համաձայնությունը:

Բավականին խոսելուց հետո Չարենցը գնաց: Հայրս ինձ մանրամասն պատմեց Չարենցի մասին և խորհուրդ տվեց նրա հետ ամուսնանալ: Ես հորս չմերժեցի և տվեցի իմ համաձայնությունը:

- Ահա այսպես եմ հանդիպել Չարենցին, - ասաց Իզաբելան շատ բարձր տրամադրությամբ»:

* * *

Անցան ամիսներ: Ծնվեց Չարենցի անդրանիկ դուստրը, որին նա իր առաջին կնոջ՝ Արփիկի անունով մկրտեց:

* * *

Իզաբելան իր հեզ ու ազնիվ բնավորությամբ, մարդկային առաքինի գծերով ինձ շատ դուր եկավ. մենք մտերմացանք և շատ սիրեցինք իրար: Ես նրան բո-

լոր հարցերում օգնում ու խորհուրդներ էի տալիս:

Մի օր Չարենցը մեզ մոտ եկավ Ալազանի հետ Կուսկոմիտե գնալու: Մենք ճաշում էինք: Ես նրան ճաշի հրավիրեցի: Մի քանի բաժակ խմելուց հետո սկսեց անկեղծանալ.

- Այ տղա Ալազան, Մարոն հասարակական կյանք մտած աղջիկ է, և դա շատ լավ է. նա քեզ հետ էլ միասին հասարակական կյանքում կկոփվի: Ուրեմն դուք կարող եք նստել, իրար հետ գրական, քաղաքական այս կամ այն հարցի շուրջ խոսել, վիճել ու հանգստանալ: Ցավոք պիտի ասեմ, որ Իզաբելան այդպիսին չէ, և դա ինձ շատ է տխրեցնում: Այ տղա, որքան դժվար է կյանքի ընկեր գտնել: Ես քառասուն տարեկան եմ դարձել, բայց այդ բանը դեռ չեմ հասկացել, կնոջ մեջ միայն գեղեցկությունն եմ հաշվի առել: Կյանքի ընկերուհու ընտրության հարցում ես նորից ու նորից եմ սխալվել:

- Ի՞նչ, նորից միտքդ փոխե՞լ ես:

- Ո՛չ, Մարո՛ ջան, միտքս չեմ փոխել, բայց այս հարցում դու ինձ օգնության պիտի գաս: Դու գիտես, որ Իզաբելան հայերեն գրել-կարդալ չգիտի: Նրան գրագիտական դպրոց ուղարկելը պատիվ չի բերի Չարենցին: Արի այսպես անենք: Դու փորձված ուսուցչուհի ես, կամաց-կամաց վերացրու Իզաբելայի անգրագիտությունը: Թե չէ հայ գրողի համար՝ հայերեն չիմացող կին ունենալը ամոթ ու խայտառակություն է:

Ապա Ալազանին դառնալով ասաց.

- Այ տղա, երբեմն հոգնած եմ լինում ու չեմ ուզում տեղիցս վեր կենալ մի գիրք վերցնելու, կարդալու: Դիմում եմ Իզաբելային ու ասում. «Ինձ տո՛ւր սև կազմով, դեղին գծով, ոսկե տառերով գրված այ այն գիրքը: Դու պրիստավլյայե՞շ *(պատկերացնում ես - խմբ.)* սա ինչ խայտառակություն է հայ գրողի համար:

Ես մեծահասակների դպրոցից մի այբբենարան վերցրեցի և սկսեցի Իզաբելայի հետ պարապել: Հինգ ամսից հետո հասանք «Տ» տառին: Իզաբելան օրվա դասն էր կարդում, երբ ներս մտան Ալազանն ու քննադատ Վանանդեցին: Չարենցը նրանց ընդունելուց հետո մտավ այն սենյակը, որտեղ մենք էինք պարապում: Դասն ընդհատեց, մեզ թևանցուկ անելով՝ տարավ իր սենյակ: Ալազանին, Վանանդեցուն նստեցրեց մի շարքում, իսկ Իզաբելային նստեցրեց գետնին փռված գորգին, այբբենարանը տվեց նրան և ինձ դառնալով՝ ասաց.

- Մարո՛ ջան, շարունակի՛ր դասդ:

- Իզաբելա՛, դասդ կարդա՛, - ասացի ես ժպտալով:

Իզաբելան կարդաց. «Տրակտո՛ր, վարի՛ր, վարի՛ր, տրակտո՛ր, գարի ցանի՛ր» տեսքը: Բոլորս ժպտալով լուռ լսում էինք: Չարենցը, դասն ընդհատելով, քմծիծաղով նայեց բոլորիս, գլուխն առավ զույգ ձեռքերի մեջ և ասաց. «Վա՜յ քեզ, հա՛յ գրող. տրակտո՛ր, իմ կնկա գլխի մեջ գարի ցանի՛ր»:

Մեր ուսումնական տարին ավարտվեց: Իզաբելան արդեն սահուն կարդում էր: Մի անգամ, երբ Չարենցի մոտ թեյում էինք, նա կանչեց Իզաբելային.

- Իզաբելա՛, գնա՛, իմ կաբինետի առաջին պահարանի երկրորդ դարակից բե՛ր Թումանյանի հատորներից մեկը:

P 2004

Իզաբելան գնաց, հինգ որպես չանցած եկավ Թումանյանի գրքերից մեկը ձեռքին: Չարենցն ուրախացած վեր թռավ տեղից, համբուրեց նախ՝ Իզաբելային, ապա՝ ինձ:

* * *

Արփիկից երկու տարի հետո ծնվեց Անահիտը, որը նման էր Չարենցին: Նա այդ կապակցությամբ խորը վիշտ էր ապրում և հաճախ էր կրկնում. «Ա՛յ տղերք, դուք պրիստավլյայեք *(պատկերացնում եք -խմբ.)* աղջիկը Չարենցի տեսքով, քթով ու բոյով: Լավ է Արփիկը դեմքով մորն է նման, տա աստված, որ խելքով էլ ինձ նմանվի, իսկ Ադոկը (այդպես էր կոչում նրան) դեմքով ինձ է նման, վայթե խելքով էլ մորը նմանվի: Այդ ժամանակ ես կխելագարվեմ»:

* * *

Ամեն անգամ Չարենցը թաշկինակի փոխարեն մի մեծ ու սպիտակ շոր էր հանում գրպանից:

- Ի՞նչ փոքր է թաշկինակդ, ի՞նչ է, թաշկինակ չունե՞ս:

- Մարո՛ջան, ինչ Բոժիկս ծնվեց (Արփիկին Բոժիկ էր կանչում) ես հրաժարվեցի թաշկինակից, սա Բոժիկիս բարուրի շորն է, գրպանս եմ դնում, որ միշտ նրա անուշ ու հաճելի բույրը զգամ:

Անցան ամիսներ: Մի օր էլ Չարենցը մի մեծ ու վարդագույն շոր հանեց գրպանից՝ քրտինքը սրբելու համար:

- Արփիկն արդեն մեծացել է, էդ ո՞ւմ բարուրի շորն է, - հարցրեցի ես ծիծաղելով:

- Գիտես ինչ, Մարո՛ջան, ես տեսնում եմ, որ Ադոկի քիթը գնալով փոքրանում է, խելքով էլ ինձ է նմանվում: Հիմա ես նրան անչափ սիրում եմ, - ասաց Չարենցը ժպտալով:

* * *

Չարենցը շատ էր սիրում մեծ գրողներին նմանվել. քանի որ Դոստոևսկին ընկերներին հյուրասիրելու համար մրգով լի դաստախուն էր պահել, ուրեմն Չարենցն էլ պետք է պահեր: Որովհետև Գանդին շատ Բուդդաներ էր դրել իր սեղանին, ուրեմն Չարենցի սեղանին էլ պետք է դրվեր մեծ ու փոքր չափերի Բուդդայի արձանիկներ: Որովհետև չին գրողները հագնում էին իրենց ազգային խալաթները և գլուխներին դնում թասակներ, ուրեմն ինքն էլ պետք է այդպես հագնվեր: Որովհետև Գանդին ծալապատիկ նստում էր գետնին փռված գորգին և ծնկների վրա դրված դավթարում էր գրում, ուրեմն Չարենցն էլ պետք է, իր սեղանն ու աթոռը թողած, ծալապատիկ նստեր գետնին փռած գորգին և իր ծնկներին դրված դավթարում գրեր:

* * *

Մի օր՝ գիշերվա ուշ ժամի, Հայաստանի Կոմկուսի կենտկոմի քարտուղար Աղասի Խանջյանը Ալազանին շտապ իր մոտ կանչեց: Մի ժամից նա տուն վերադարձավ և պատմեց հետևյալը. «Փարիզում վախճանվել է մեր պայծառ Կոմիտասը: Նրան խնամող հանձնաժողովը դիմել է ընկեր Խանջյանին, որ ընդունի և Երևանում թաղի Կոմիտասի դիակը: Խանջյանն առանց Բերիայի հետ համաձայնեցնելու տալիս է իր համաձայնությունը: Բերիայի երևանյան գործակալները այդ մասին հաղորդում են Բերիային: Բերիան հեռախոսով կապվում է Աղասու հետ և ասում.

- Աղասի՛, լսել եմ, որ Փարիզից ինչ-որ հոգևորական, ինչ-որ պոպ (քահանա - խմբ.) ես բերում՝ Երևանում թաղելու համար: Ես կտրականապես արգելում եմ: Հեռագրիր թող չուղարկեն, մենք հոգևորական թաղելու համար գումարներ չունենք:

Խանջյանն անսահման հուզվել ու վրդովվել է, անհարմար էր զգում, ուստի խնդրեց, որ ես ուղարկեմ հեռագիր, որ Կոմիտասի դին չուղարկեն: Խե՛ղճ Աղասի, տեսնո՞ւմ ես՝ ինչպիսի պայմաններում է աշխատում այդ պայծառ մարդը»:

Մյուս օրն Ալազանը գնաց Կենտկոմ՝ իմանալու հեռագրի պատասխանի մասին: Խանջյանը մի հեռագիր է մեկնում Ալազանին, որտեղ գրված է լինում. «Նավը երեք օր է, ինչ դուրս է եկել և գտնվում է Միջերկրական ծովում. ետ դարձնել չենք կարող: Կոմիտասին խնամող հանձնաժողով»:

Ուրախությունից Ալազանն ու Խանջյանը գրկախառնվում են:

Մի քանի օրից մեր տուն է գալիս Չարենցը.

- Ա՛յ տղա Ալազան, մի պազոռնի *(խայտառակ* - **խմբ.***)* բան եմ լսել, բայց ականջներիս չեմ հավատում:

- Դժբախտաբար լսածդ ճիշտ է, բայց բարեբախտաբար հեռագիրը ուշ է տեղ հասել, և Կոմիտասին բերող նավն արդեն լողում է Միջերկրականի ջրերում: Շուտով Կոմիտասը Երևանում կլինի, - Չարենցին հանգստացնելով ասաց Ալազանը:

- Ճի՞շտ ես ասում, էդ ինչ լավ բան եղավ: Թող հիմա Բերիայի սիշչիկները *(լրտեսներ* - **խմբ.***)* տրաքվեն: Ինչ-որ հոգևորական: Մի՞թե Կոմիտասը հայ ժողովրդի համար ինչ-որ հոգևորական է: Ողորմելինե՛ր, տգետնե՛ր, թո՞ւ ձեր երեսին, անամոթնե՛ր, և դրանք են մեր երկիրն ու կուլտուրան ղեկավարում: Վայ քեզ հայ ժողովուրդ... Մարո՛ ջան, մի կոնյակ բե՛ր՝ խմենք Կոմիտասի հաղթանակի և հիշատակի կենացը:

Թեև Չարենցը Կոմիտասի հաղթանակի կենացը խմեց, բայց էլի մնաց նույն խռովահույզը: Փողոցում ում որ հանդիպում էր, ասում էր. «Ինչ-որ հոգևորական... Վա՜յ, ես թքեմ ձեր տգետ երեսներին»:

* * *

Վերջապես Կոմիտասը հասավ Երևան: Կազմվեց նրան ընդունող և թաղող հանձնաժողով, որի կազմում էին՝ Գրողների միության կողմից Ալազանը, Լուսավորության ժողկոմատի կողմից՝ Արտո Եղիազարյանը, Ներքին գործերի մինիստրության Բերիայի ներկայացուցիչը և այլ մինիստրությունների և կազմա-

կերպությունների ներկայացուցիչներ: Թաղման հանձնաժողովը ցերեկվա ժամը 12-ին պետք է ընդուներ Կոմիտասին: Հանձնաժողովի անդամները, որոնց թվում նաև ես, գնում էինք Կուլտուրայի տուն, որտեղ դրված էր Կոմիտասի դագաղը: Ճանապարհին մեզ միացավ նաև Չարենցը:

Բեմի վրա դրված էր Կոմիտասի գեղեցիկ, խնամքով պատրաստված դագաղը, որի գլխավերևում կար մի փոքրիկ պատուհան, որտեղից երևում էր Կոմիտասի պայծառ դեմքը: Բոլորը լուռ ու տխուր, գլխարկները հանած խոնարհվում էին Կոմիտասի առջև: Հանկարծ Բերիայի ներկայացուցիչը ճամպրուկը բացեց, հանեց լոմ ու կացին, բացեց դագաղի կափարիչը ու սկսեց շոշափել դիակի կողքերն ու գրպանները: Այս երևույթը բոլորին անսահման հուզեց: Չարենցն իրեն զսպել չկարողացավ, ուղղակի գոռալով ասաց. «Մի բան գտա՞ք, անամոթնե՛ր, խայտառակնե՛ր, մեռելին անգամ հանգիստ չեն թողնում. թո՜ւ ձեր նամուսին»: Չարենցը, համարյա իրեն կորցրած, օրորվելով, ինքն իր հետ խոսելով, դուրս եկավ դահլիճից: Ցուցադրական դուրս եկան նաև հանձնաժողովի անդամները՝ Կոմիտասի մոտ թողնելով միայն Բերիայի ներկայացուցչին:

* * *

Չարենցը շատ էր հավանում, պատկառանքով ու հարգանքով էր խոսում Աղասի Խանջյանի մասին: Ես հաճախ էի լսում նրա հիացական խոսքերը. «Ա՛յ տղա Ալազան, Աղասին մեծ օվկիանոսների նավ է, բայց ափսոս, որ լողում է ծանծաղուտներում»: «Հայ ժողովուրդը շատ մեծություններ է տվել, որոնցից մեկը Աղասին է», «Ա՛յ տղա, նա հայ գրականություն ավելի լավ գիտի, քան մենք՝ գրողներս: Իմ կարծիքով, նա թաքնված բանաստեղծ է: Տեսա՞ր, Մեծարենցին բերանացի գիտեր և մեզ էլ ամաչեցրեց»:

* * *

Ալազանի բանտարկության երկրորդ օրը ինձ մոտ եկավ Չարենցը: Փրփրած էր, ինչպես ալեհույզ ծովը. «Ա՛յ աղջի, էս ի՞նչ պազոռնի (խայտառակ – խմբ.) բան եղավ, մեր բոլոր տղաներին բանտարկեցին: Պատմիր տեսնեմ՝ ինչ ասացին, ինչ անուն դրեցին այդ ազնիվ կոմունիստին»: Ես արտասվելով մանրամասն պատմեցի բանտարկության զազրելի արարողությունը, թվեցի նաև, թե ինչ գրքեր տարան: «Գրքեր տարան» խոսքը Չարենցի գլխում չտեղավորվեց: Նա ինձ նորից կրկնել տվեց: Ես նորից թվեցի՝ Աբովյան, Ռաֆֆի, Նարեկացի, Խորենացի, Մեծարենց... «Ա՛յ քեզ նորություն, ուրեմն հայ գրողը այդ գրքերը կարդալու իրավունք չունի՞: Սա կատարյալ բարբարոսություն է: Թո՜ւ դրանց երեսին, ա՛յ աղջի, հո մենք չուկչան ու չուկոտը չե՞նք, մենք հին ու մեծ կուլտուրա ունեցող ժողովուրդ ենք: Վա՜յ քեզ, հա՛յ գրող»: Ապա մի փոքր լռությունից հետո, առանց մի խոսք ասելու, սենյակիս դուռն ուժեղ բացեց և նույն ուժգնությամբ էլ փակեց ու գնաց:

* * *

Մի օր Չարենցն իրենց տանն ահա թե ինչ ասաց. «Մարո՛, ես եկել եմ այն եզրակացության, որ մեր տղաներին լավ ծեծել ու ջարդել են, դաժե (նույնիսկ – խմբ.) խմեցրել ու հարբեցրել են: Անցած օրը այդ կինտո Մուղդուսին ինձ իր մոտ կանչեց ու ցույց տվեց Ալազանի, Ակսելի և Գուրգենի (Վանանդեցի) ստորագրությամբ ու ձեռագրերով մի պազոռնի թուղթ, որտեղ գրված էր. «Մենք ունեցել ենք Չարենց-Բակունց-Ալազան հակահեղափոխական-նացիոնալիստական-տրոցկիստական խմբակ»: Ախր որտեղի՞ց են այդպիսի չեղած խմբակի մասին հնարել: Մարո՛ ջան, ես վերջնականապես եկա այն եզրակացության, որ նրանք մեր տղերքի ձեռագրերն ու ստորագրությունները կամ կեղծել են, կամ էլ նրանց իսկապես այնքան են ծեծել ու ջարդել այդպիսի պազոռնի փաստաթուղթ գրել տալու համար: Այս խայտառակությունների մասին ես այլևս լռել չեմ կարող, աշխարհով մեկ կգոռամ և իրենց կխայտառակեմ, թող ինձ էլ բանտարկեն: Այդ կեղծ փաստաթղթերի հեղինակները Մուղդուսին, Ակոպովը և Ամատունին են: Թքեմ այդպիսի ղեկավարների վրա. Աղասու գլուխը կերան, հիմա էլ ուզում են մեր խեղճ տղերքի գլո՞ւխն ուտեն: Սատանան կասի՝ դուրս արի պատշգամբ և ժողովրդի առաջ խայտառակիր այդ սրիկաներին, բայց վախենում են՝ ասեն՝ Չարենցը գժվել է, և ձեռքիցս բռնեն ու ինձ գժանոց տանեն: Չգիտեմ՝ ում դիմեմ, բոլորն էլ իրար հետ կապված սրիկաներ են»:

Մի փոքր լռությունից հետո ես նրան ասացի.

- Իսկ դու գիտե՞ս, որ քո «Աքրոստիքոս» բանաստեղծության գաղտնիքը բացվել է, և ժողովուրդն արդեն այդ մասին խոսում է: Երբ լսեցի, բացեցի գիրքդ և կարդացի. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Չարենցը ցնցվեց.

- Ինչպե՞ս են այդ սրիկաները գլխի ընկել:

* * *

Մի երկու օրից նորից գնացի Չարենցի մոտ, բայց հանդիպեցի Իզաբելայի արտասվալից աչքերին:

- Չարենցին բանտարկեցին, Մարո՛ ջան, - ասաց Իզաբելան՝ բարձրաձայն արտասվելով:

- Վերջապես նա իր նպատակին հասավ, բանտարկվեց. միշտ այդ ուղղությամբ էր մտածում, - ասացի ես:

Այդ օրը ես տուն չգնացի, մնացի Իզաբելային մխիթարելու: